

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ *

XV.— Բանկալթիի օճախը

Հայ մտավորականությունը Պոլսո մեջ կապերեր տարտղնած։ Նախ խորթ էին իրարու մեր մտավորականները։ Կուսակցական կիրքերու ամենեն բռնկած տարիներն էին ու հոգեպես իրարմե ուծացած կապրեին մեր գրողներն ու արվեստագետները։

Հետո սկիզբեն իվեր մտավորականությունը զուրկ էր եղեր սեփական օճախե մը, ուր հավաքվեր, բսեր ու լսեր, թարմանար։

Մատենադարան՝ Պոլիսը երբեք ունեցած չէր, այդ բառին նոր օրերու իմաստովը։ Թաղերու մեջ կազմված զանազան ընթերցարանները խամրած էին Համիդի օրով, իսկ Հուրրիեթին՝ կուսակցական հավաքատեղիներու վերածված էին անոնք։

Ազգային մատենադարան շողշողուն անունին տակ գիրքերու համեստ կույտ մը ուներ միայն Պոլիսը։ Հակոբ Արշակի օրով հիմնված 1800-ական թվականներուն՝ Համիդի ամբողջ շրջանին կղզված կմնար Ղալաթիո խորհրդարանի դարակներուն մեջ՝ Բաբկեն վարդապետի հսկողության տակ, Սահմանադրութենեն հետո փոխադրվելու համար Բերա, միշտ դարակներու մեջ կղզված, այս անգամ Արամ Անտոնյանը, հետո ալ Գևորգ Մեսրոպն ունենալով իբրև ղահակ։ Բոլոր փորձերը զայն մեր օրերուն պատշաճեցնելու և անոր շուրջ կյանք ստեղծելու՝ անպտուղ անցան ու ան շարունակեց զիակ մը մնալ մինչև որ հայ արվեստի սուրբ հոն հաստատեց իր կեդրոնը 1921-ին, վաղանցուկ ոգևորություն մը ստեղծելու համար հոն։ Այնպես որ Հուրրիեթի բոլոր տևողությամբ Պոլսո հայ մտավորականությունը քով քովի գալու հնարավորութենեն զրկված էր իսպառ։ Հավաքավայր մը չուներ, ու ունենար ալ հավաքվելու փափագը չկար մարդոց մեջ։

Միակ ժամադրավայրը, ուր կրնային հայ գրողներն ու արվեստագետները զիրար զանել՝ թերթերու խմբագրատուներն էին, ինչպես եղեր էր երբեմն Համիդի շրջանին ալ։ Բայց կիրքով այնքան բռնկած էր Պոլիսը այն տարիներուն, որ ամեն խմբագրատուն իր ուրույն այցելուն ուներ ու իր սեփական համակիրները, որոնք զուրսը իրարու բարև ալ չէին տար։

Հայ գրողները կխրտչեին իրարմե։ Գրական լուրջ թերթ մը չկար, որ համախմբեր բոլոր ուժերը հավաքական ճիգի մը շուրջ։ Եղածներն ալ աջեն ու ձախեն մուրացված հոդվածներու անարյուն փունջեր էին լոկ, որոնք աղատված էին շարժում մը ստեղծելու, գոնե հոգեկան կապ մը գտնելու հայ գրչի և արվեստի մարդոց միջև։ Մրրիկ մը զատեր էր մեզ բոլորս ու ամեն օր ավելի ևս կզատեր։ Հայ հրատարակչական ընկերություն մը կազմելու գաղափարն անգամ, որ գաղ մը ոգևորեց Պոլիսը 1910-ին, երկու ճակատի վերածեց հայ մտավորականությունը՝ երկու տարբեր հրատարակչություններու միջև բաժնելով զանոնք, մեկ կողմին տալով Գրիգոր Զոհրապը, Եղիշե Դուրյանը, Ռուբեն Զարդարա-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի Հ Հ Ա-ից, Ե—Զ—Է-ից, Ը—Թ-ից, Ժ-ից և 1966 թվականի Հ Հ Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից և Զ-ից։

յանը, Երուխանը, Մելքոն Կիւրճյանը, Զապել Եսայանը և մյուսին՝ Տիգրան Կամսարականը, Զիֆթե Սարաֆը, Երվանդ Օայանը ու արդյունքն այն եղավ, որ վերջիններուն փորձը չծնած չորցավ, մինչ առաջինները այնքան աղմուկե հետո միակ գիրք մը լույս ընծայեցին ու ցրվեցան անոնք ալ իսպառ։

Ու ահա Կոմիտաս արդեն մեր մեջն է։ Բնակարանը, զոր ան ունեցավ Բանկալթիի հայ գերեզմանոցին ճիշտ դեմը՝ հայ մտավորականության համար հոգեկան ապաստան մը եղավ առաջին օրեն։ Ան կարծես եղբայրացուց մեզ բոլորս։ Հոն իրարու սկսան հանդիպել հայ մտավորականության տարբեր հատվածները՝ այլևս իրարմե առանց խրտչելու։ Այն օրերու մեր բարքերուն մեջ հրաշք մըն էր աս, զոր մինչև այսօր ալ մարդ չի կրնար առանց հուզումի հիշել։

Կոմիտասի բնակարանը հայ մտավորականության համար տեսակ մը օճախ դարձավ այսպես։ Քաջալերված այն սրտաբաց վերաբերմունքեն զոր Կոմիտաս ցույց կուտար բոլորին հանդեպ՝ շատերը այցի կուգային անոր, օրվան որևէ ժամուն։ Ու հոն զիրար կգտնեին մարդիկ, որոնք զուրսը իրարու կգլանային իրենց բարևը։ Հաղորդական այն հոգին, որ Կոմիտասինն էր սիրտե սիրտ կփոխանցեր իր ջերմությունը։

Ու դիպվածը Կոմիտասի բնակակից էր բրեր ուրիշ մեծ արվեստագետ մը, որ նկարիչ Թերլեմեզյանն էր։ Արվեստի երկու մեծ դեմքեր միևնույն կտուրին տակ եղբայրաբար կապրեին այսպես, իրենց հասարակաց հմայքով ուխտավայրի մը վերածելով Կեօչեօղլիներու պատկանող այս շենքը Բանկալթիի պողոտայի վրա, հայոց երբեմնի գերեզմանատան ճիշտ դեմը՝ հայաշատ ամբողջ թաղ մը ունենալով կոնակը։

Ողջամիտ՝ որքան շատ քիչերուն տրված է ըլլալ մեր արվեստագետներեն, խրոխտ՝ իր արվեստագետի ետին մեջ, հանձնապաստան սեպվելու աստիճան, անկեղծ իր դատաստաններուն և արտահայտությանց մեջ, ինչ որ կոպտության պիտի վերագրեիր, եթե տեգին չըլլային անոնք, Փանոս Թերլեմեզյան ուրույն տիպար մըն էր արվեստագետի։ Սահմանափակ էր անշուշտ իր տեսական պաշարը և համեստ՝ արտահայտվելու իր ձիրքը։ Բայց փոխարեն որքան ողջախոհ էր ան իր մտածումներուն ու իր արվեստին մեջ։ Ան, եթե հարգանք կպարտադրեր դիմացինին՝ իր տաղանդին ուժովը, զայն իրեն կկապեր միևնույն ատեն՝ իր խոսքին պարզությամբն ու անկեղծությամբը։

Կոմիտասի բնակարանը այլապես ալ արվեստի բույն մը կդառնա շաբթվան գրեթե բոլոր օրերուն։ Թերլեմեզյան ևս իր ամենօրյա այցելուներն ուներ, և իր աշակերտուհիները՝ որոնք շենքը կլեցնեին տարբեր եռուզեռով մը, ու երկյուղածությամբ կտոգորեին սովորական այցելուն, որ շվարած կմնար պահ մը։ Սենյակե մը գաշնամուրին ձայնը կուգար կամ քրքիջներու հեղեղը. ուրիշ սրահի մեջ ներկերը կխաղային պաստառին վրա, երբեմն խառնվելով վարպետի քրքմնջյուններուն, որոնք կբխեին վանեցիի անրուժելի հագագեն։ Ի՞նչ հարկ ուրիշ կոնսերվատուարի. անոր մանրանկարը կար արդեն, և ան առայժմ բավ էր մեզի։

Ու երևակայեցեք ի՞նչ կրլլաբ եռուզեռի այս բույնը, եթե Շահմուրադյանն ալ գար բնակակից դառնալու երկու մեծ վարպետներուն։ Արդարև նույն այս շենքի մեջ կապրեր Մշո սոխակը ևս ամեն անգամ, որ Պոլիս ըլլար։ Արմենակ Շահմուրադյան նոր ոգևորություն կբերեր հետը ու նոր եռուզեռ, ու բնական է՝ նոր այցելուներ։ Երեք կդառնային հիմա աղմկարարները, ու երեք՝ նաև դավառները, որոնք մրցումի կելնեին իրենց կատակներով և հեգնություններով ճաշի պահերուն, երբ մանավանդ դուրսեն հյուր մը մասնակից ունենային իրենց հասարակաց սեղանին։

Վաղուց է կար հոգևկան կապը հայ երգի երկու վարպետներուն միջև՝ վարպետի և աշակերտի կապ։ Տարիներ հետո, երբ Կոմիտաս աչքերը ընդմիշտ կփակե, կդրեր Շահմուրադյան.

«Կճանչնամ Կոմիտաս վարդապետը աշակերտությանս շրջանեն,— իրեն աշակերտած եմ Գևորգյան ճեմարանին մեջ։ Զղային էր ու բարկացոտ,— իր նկարագրի այս դիծը երևան կուգար մասնավորաբար արբունքի շրջանեն վերջ։ Եվ սակայն օժտված էր կամքի ուժով մը, որով կզսպեր իր պոռթկումները։

«... Շատ անգամներ միասին եղած ենք Կոմիտասի հետ,— Պոլիս, Փարիզ, Ժնև, Լոզան, Անգլիա։ Շենշող էր, կատակաբան և շատ ընկերական։ Գիտեր զսպեր իր բարկությունը ինչ պատճառ ալ ունենար։ Երբեք շահամոլ չէր, դրամին հարկը չէր գիտեր»[1]։

Շահմուրադյան, հակառակ գոռոզության, զոր իր տաղանդը ներշնչեր էր իրեն, ինքզինք միշտ աշակերտ սեպեց Կոմիտասին։ Անոր հարկին տակ միշտ առիթ ուներ, եթե ոչ սորվելու, գոնե թարմանալու։ Ինչպես չթարմանար արվեստագետ մը այս մթնոլորտին մեջ։

Շահան Պերպերյան, որ մեկն եղավ խանդավառության մեր օրերու ամենեն ջերմ

[1] «Յառաջ», 1935, Հոկտեմբեր 27։

ոգևորվողներեն և ոգևորիչներեն, սապես կբնութագրե մթնոլորտը, զոր Կոմիտաս իր շուրջն ստեղծեց Պոլսո մեջ.

«Կուգա Պոլիս. ու այլևս ժողովրդական խանդավառության ծովի մը մեջեն հաղթական ընթացք մըն է իրը։ Այս այն շրջանն է, ուր վարդապետը կբազմապատկե կարծես ինքդինքը հասնելու ամեն ուր և ինչ բանի մեջ, որ իր առաքելական կոչումը կկանչեր դինքը։ Պոլիս, Իզմիր, Եգիպտոս, դարձյալ Փարիզ ու դարձյալ Պոլիս իր համերգներն ու դասախոսությունները, իր անձը ինքնին կտարածեն անպատմելիորեն հրատեղ մեծ ոգևորությունը, որ աղգային կյանքի վերադարձած դարունի այդ շրջանին իր բուն դիմագիծը կհագցնե։

Ֆրանսական ու ռուսական նորագույն երաժշտության հետ իր շփումը նոր ու գերազույն կատարելություն մը բերած է հիմա իր ստեղծագործություններուն։ Ու Պոլսո իր բնակարանին մեջ, զոր կբաժներ նկարիչ Փանոս Թերլեմեզյանին հետ և որ պոլսահայ մտավորականության հայ արվեստի օճախ մըն էր դարձած, համերգներու պատրաստության բոլոր հոգնությունները հետո, անդադրում իր աշխատանքներեն հայ երաժշտագիտությունը կառուցանելու, հիմնելի հայ երաժշտանոցի մը իբր գաղափարական խարիսխ, իր աշակերտներուն հասնելու, հայ ֆոլկլորի և եկեղեցական երաժշտությունը նորագույն և գեղեցկագույն գործերով օժտելու։ Կսկսի նաև երաժշտության մեծ սեռերուն մեջ իր անձնական գործը բերելու աշխատանքներուն, «Անուշ»-ին վրա օպերայի մը պատրաստության»[2]։

Կոմիտասի ազդեցությունը Պոլսո հայ մտավորականության վրա սապես կպատմե Թերլեմեզյան.

«Կոմիտասի աննման համերգները և բովանդակալից դասախոսությունները Պոլսո առաջադեմ տարրերին ոչ միայն ուրախացնում ու հիացնում էին, այլև ոգևորում։ Այդ օտար գաղութավայրում եղած մտավորականության ազնիվ և հայրենասեր մասը սկսեց փառավորվել և պարծենալ, որ ինքը հայ է։ Սկսեց գիտակցել, որ իրենց արհամարհած խոռ և խըմպող գավառացի հայը, որ մեր դարավոր կուլտուրայից մի սաղմնային ժառանգություն ունի իր մեջ, նրա ստեղծագործական միտքն ու ոգայությունն է կերտել նման նուրբ և հուզիչ երաժշտությունը։ Քանի գիտակցությունը խորանում էր, այնքան ավելանում էր իրենց զարմանքը՝ նրա համար, որ «վարի դասակարգի» անպետ գյուղացիներն էին ստեղծած այդ սքանչելիքները և ոչ թե վերի խոժոռ ու շահագործող դասակարգի մարդիկ»[3]։

Կոմիտասի բնակարանը այցելությունը հաճախ կընդուներ նաև Պոլսո օտար երաժշտագետներուն, որոնցմե էին՝ Ֆուրլանին, Սելվելին, Հեկեն, Լանկեն, Կոորին, ինչպես նաև հրապարակին վրա ծանոթ երկու հայ արվեստագետներուն՝ Հարություն Սինանյանի և Էդգար Մանասի։

Ու դարմանալի չէր ուրեմն, եթե մթնոլորտը, որ Կոմիտասի տան մեջ կտիրեր, հանդուցիչ բան մը ունենար հայ մտավորականներու համար։ Եվ ահիթ փնտրեին բոլորը թարմանալու երթալ հոն։ Հոն կհանգիպեիր Վարուժանին ու Սիամանթոյին, Չարյանին ու Սևակին, Շահան Պերպերյանին ու Չեխուրյանին, Լեոնյանին ու Նապարյանցին, վրձինի ու բեմի մարդոց և դեռ շատերու։ Խոսքը չենք բներ դեռ դուրսեն և մանավանդ Կովկասեն եկողներուն, որոնք մեծ մասամբ իր մտերիմներն ալ էին. ինչպես Դարեգին վրդ. Հովսեփյանը, Եղիշե Թադևոսյանը, Ալեքսիք Իսահակյանը կամ Վրթանես Փափազյանը, և որոնց ժամադրավայրը նույնպես Կոմիտասի բնակարանն էր։

Ահիթ հաճախ ինձ ալ տրված է Կոմիտասի մոտ ըլլալ։ Իր գոնեն կանցներ տանս ճամբան ու հանդգնությունը երբեք ինձ չպակսեցավ երթալ զայն խանդարել պահ մը, ամեն անդամ պատրվակ մը գտնելով գաղտուկ մը կսպրդեի ներս, չուզելով, որ ընդհատե իր աշխատանքը։ Ավելի ճիշտ, գիս կհաւիշտակեր այդ աշխատանքը, մանավանդ երբ ան դաշնակին առջև, նվագելով և երգելով զբաղած կըլլար։ Մասնավորաբար գմայլելի էր սրինգով իր երգերը փորձած պահերուն. ան հաճախ ըսած էր մեկի, թե սրինգը կախարդական այն նվագարանն է, որ կրնա լրիվ մեկի տալ հայ գեղջուկին երգերը։

Ան կմոռնար ըսելու, որ ինքն էր անոնց ճշմարիտ թարգմանը։

Կոմիտասին պատուհանեն երբ որ նայեիր դեպի պողոտային հանդիպակաց եղերքը, Բանկալթիի հայոց գերեզմանոցը կփռվի՛ր առջիդ։ Մեր օրերուն մեռել չէր թաղվեր այլևս այնտեղ։ Բերայեն Բանկալթի գտցող ճամբուն վրա ընդարձակ գետին մըն էր այդ գերեզմանոցը, զոր խլելու փորձեր հաճախ էին ըրեր թուրք իշխանությունները զորանոցներ կառուցանելու համար հոն, ու ամեն անգամուն ալ ծառացեր էր հայ ժողովուրդը ու ձախողության էր մատնել բոլոր փորձերը։

---

[2] Շահան Ռ. Պերպերյան, *Կոմիտաս վարդապետանձը և գործը*, Պուքրեշ, 1936, էջ 11։

[3] «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 191։

Որպեսզի ղայն չխլեն՝ մեկ գիշերվան մեջ եկեղեցի մըն էր կառուցել հոն հայ ժողովուրդը, նման փոքրի մը առթիվ, որուն հրամանը բարձրեն էր եկած։ Ուրիշ անգամ մը,— կպատմեին մեր տղայությանը,— դիմացի զորանոցի վաշան, որ հրաման էր ստացել գերեզմանոցը գրավելու, գիշերը լույս էր տեսեր Հոգևոր Տիրոջ գերեզմանին վրա ու սարսափած առտուն գացեր էր պալատ պատմելու։ Սուլթանը, ինքն ալ սարսափած, ետ էր առեր հրահանգը, ու հրաման տվեր էր, որ կանթեղ վառվի վրան, իսկ յուղը ղրկվի պալատեն։

Կոմիտաս իր պատուհանեն միշտ կդիտեր «Հոգևոր Տերը»։ «Հոգևոր Տերը» Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսն էր, որ աչքերը փակեր էր Պոլսո մեջ, երբ հոնկե կանցներ հայ ժողովրդի արցունքն ու դատը Արևմուտք տանելու համար։ 1680-են իվեր ուխտատեղի մը դարձեր էր իր գերեզմանը Պոլսո հայության համար, ու ավելի կբորբոքեր զայրույթն անոր մեջ՝ ամեն անգամ, որ գերեզմանոցը կփորձեին իրմե խլել։ Կոմիտասը քանի անգամ տեսած եմ մանեկած ատեն գերեզմանատունը, ու անոր երկյուղածության պահերը Հոգևոր Տիրոջ շիրիմին առջև։

Ես ղայն կհիշեմ նաև 1912 փետրվար 8—21-ի պատմական օրը, երբ ժողովուրդ մը գերագույն ընդվզման մը մեջ տեր կանգնեցավ իր մեռելներուն։ Գերեզմանատունը գրավելու փորձերը, որոնք կանդ էին առեր քանի մը տասնյակ տարի, այդ օրերուն կրկին վերսկսեր էին։ Ժեռն Թյուրք կառավարությունը ամեն գինով կուզեր մաս մը կտրել գերեզմանոցեն պողոտային կցելու համար, և բանվորներ ղրկեց փլցնելու համար պատը։ Հայ ժողովուրդը չթողուց, որ պղծվին իր պապերուն գերեզմանները և ամեն կողմե խուժեց արգելք ըլլալու համար բանվորներուն։ Ու ինչ որ անոնք հաջողեր էին փլցնել ցորեկին՝ գիշերը հյուսեց ինքը։

Ժողովրդական ցասման պահու մը հանդիսատես եղավ Պոլիս այդ օրը։ Հոգևորական ու աշխարհական ձեռք ձեռքի տված Հոգևոր Տերը կպաշտպանեին։ Ավետիք Իսահակյանին հետ գացինք տեսարանը դիտելու. հրճվանքեն կիսայտար մեծ բանաստեղծը։ Անկյուն մը խռնված էին խումբ մը հայ մտավորականներ։ Պարույր Քեչյանը, Արամ Անտոնյանը, Սարգիս Մինասյանը, Կիկոն և ուրիշներ, իրենք ևս ըմբոշխնելով սփոփիչ պատկերը ժողովրդական ինքնաստեղծ այս ցույցին։

Ու հեռուեն կնշմարենք հանկարծ Կոմիտասի սիլուետը, որ արագ-արագ կմոտենա մեզ։ Պիտի չմոռնամ հուզմունքը, որ կկարդացվեր դեմքին վրա այդ պահուն։

— Այս ժողովուրդը միթե կմեռնի՞.— գրչեր էր Իսահակյան իր առջև պարզված տեսարանեն հմայված։

Կոմիտաս բառ մը միայն շշնջաց, ու արագ-արագ հեռացավ դեպի իր տունը.

— Փա՜ռք...

Ան ըսել ուզեց՝ փառք այն ժողովրդին, որ տեր կկանգնի իր սրբություններուն։

XVI.— Կոմիտաս և իր շրջապատը

Կոմիտաս քիչ ընտանիքներու միայն կայցելեր։ Այդ քիչերեն մեկը Թերլեմեզյաններն էին։ Թերլեմեզյանց հետ Կոմիտասի այդ կապը Փանոսն էր անշուշտ, որ ստեղծած էր, բայց ան սերտ մնաց Փանոսի բացակայության ալ։ Կոմիտաս, երբ մտերիմ հարկ մը կմտներ՝ իր հետ կբերեր նաև զվարթություն, աղմուկ ու կատակ։ Այդպես էր մանավանդ Թերլեմեզյաններուն մոտ։ Այդ օրերուն փոքր աղջնակ մրն էր անոնց դուստրը՝ Արշալույսը, այժմ տիկին Սարգիսյան, բայց ան հուզմունքով կոգեկոչե ցնծության վայրկյանները զոր Կոմիտաս կստեղծեր իրենց հարկեն ներս։ Ան կպատմե, օրինակ, «Յառաջ»-ի մեջ, այդ անուշ պահերեն մեկը.

«Մանկությանս կաղանդի գիշերները իրենց մոգական խաղալիքներով և դեռ շատ մը կաղանդի գիշերներ իրենց անմոռանալի զգացողություններով այնքան խոր հիշատակ չեն թողած մեջս, որքան ան կաղանդի գիշերը, զոր տոնեցինք Պոլիս, մեր տան մեջ, Կոմիտաս վարդապետի, Շահմուրաղյանի և հորեղբորս՝ նկարիչ Փանոս Թերլեմեզյանի հետ։

«Անցյալի մշուշի մեջեն, այնքան հստակ, այնքան գրավիչ պատկեր մը կնկարվի աչքերուս դեմ, ամեն անգամ որ կխորհիմ այդ օրվա մասին։ Փանոսը՝ Վարագա լեռան այծյամներու պես կցատկրտե, Շահմուրադյանը սենյակի գոռն ապակիներուն վրա ձեռքով կթմբկահարե պարերգներ՝ Մուշի զուռնային և նաղարային նմանությամբ և վարդապետը ծալապատիկ նստած, աչքերը փակ՝ կընկերակցի երևակայական վին մը նվագելով իբր աշուղ հնադարյան։

«Եվ ահա վինեն վերջ դաշնակը, որ կալեկոծի վարդապետին հրաշագործ մատներուն տակ ու իր ձայնը, այդ անուշ, աննման ձայնը մեր հոգիներուն կփոթթվի անպատմելի հուզումի ալիքներով.

«— Միրանի ծա՛ռ, բար մի տա...»։

Տիկ. Սարգիսյան կոգեկոչե հետո Կոմիտասի ուրիշ այցերը իրենց.

«Այն երանելի, անհոգ օրերուն, շաբաթ երեկոները մասնավոր հրապույր մը ունեին ինծ համար։ Հաղիվ դպրոցեն վերադարձած, կարգ ու կանոնի սիրահար բնավորությանս հակառակ, պայուսակս կնետեի անկյուն մը և խոհանոցը կառնեի շունչս։

«— Ըսե՛, Կոլե, ի՞նչ ունինք այս իրիկուն. համով բաներ եփա՞ծ ես, վարդապետին սիրածները չմոռցա՞ր հարկավ։

«Կոլեն, խոհարարուհին, Վանի գյուղերեն, նմուշ մը հերոսության ու կառուցվածքի, կամ հպարտորեն կբանար յուրաքանչյուր կաթսայի կափարիչը իր հրաշակերտները ցույց տալով, կամ քիթին տակեն խստորեն կմոլտար. «Կա, ինչ որ Աստված տվեր է»։

Միշտ այդ էին իր պատասխանները, օրվան իր լավ կամ գեշ տրամադրության համաձայն։

«Բայց այդքան շուտով հուսահատողներեն չէի. խոհանոցեն չէի հեռանար, մինչև վստահ չըլլայի, թե թանապուրը և շոգիով եփած միսը մաս կկազմեին կերակուրներու ցանկին։ Չէ՞ որ մեր սիրելի վարդապետը այդ երեկո, ինչպես միշտ, անոնց ի տես, երախայի մը խանդավառ բացականչություններով սեղան պիտի նստեր։ Ա՜խ, այդ երջանիկ օրերը»։

Կոմիտաս մտերիմ հարկ մը ևս ուներ, Աստվածատուր Հարենցինը։ Առևտրական մըն էր Հարենցը, բավական ունևոր և մոտիկ ազգական համբավավոր Ունճյաններուն։ Բայց քաղքենի բարքերեն շատ բան չէր ժառանգած ան։ Առաջին շրջանավարտներեն կեդրոնականի, ու իրեն դասակից ունեցած էր Արշակ Չոպանյանը ու Երվանդ Մանվելյանը, Հարենց, իր քաղքենիի կյանքին մեջ իսկ՝ ջերմ բարեկամ մը մնացած էր միշտ գրականության և արվեստներու։ Առաջին իսկ պահեն ան կապված էր Կոմիտասին և մաս կկազմեր երաժշտանոցի հանձնախումբին՝ միակը թերևս անոր կազմին մեջ, որ սրտանց խանդավառված էր ձեռնարկով։ Կոմիտաս Հարենցներու հարկին տակ պարզ հյուրե մը ավելին էր. արվեստի պահեր կապրեր հոն. կերգեր ու կնվագեր. հոն կերթար փորձել իր նոր հորինած երգերը, որոնց դաշնակով կընկերակցեր համակրելի արվեստագետուհին՝ որ տիկին Արուսյակ Հարենցն էր։ Հարենց ընտանիքը մտերիմ հարկ մը պիտի մնար միշտ իրեն, ու հոն իր հուշումները պիտի ամոքեր աքսորե դարձին, ինչպես պիտի տեսնենք հոգեկան մեծ տագնապեն քիչ առաջ։

Թորգոմյաններու տունը ևս ապանջական հարկ մըն էր Կոմիտասին համար, ինչպես եղեր էր և պիտի ըլլար գրչի և արվեստի բոլոր մարդոց համար, որոնք Պոլիս կայցելեին որևէ ատեն։ Բժիշկ Թորգոմյան գուրգուրանքով կընդուներ զանոնք բոլորը, ու պատահական չէ, որ իր ընտանեկան շրջապատեն էին երաժշտանոցի հանձնախումբի երեք անդամները, Սիսակ Ասճյան, Մարտիկ Ճկսերճյան և ինք՝ բժիշկը, թեև առաջինը շատ շուտ աչքերը փակեց, Ճքսերճյան անվանական մասնակցություն բերավ միայն և տոքթ. Թորգոմյանն էր, որ շարունակեց Կոմիտասի կողքին մնալ միշտ, իբրև բարեկամ և բժիշկ, և ան էր, որ հոգ տարավ վարդապետին անոր հոգեկան տագնապի օրերուն, թեև վարդապետը՝ իր հիվանդության նոպաներուն մեջ՝ պիտի խրտչեր բոլոր անոնցմե, որ երբեմն իր շուրջն էին եղեր և անոնց կարգին նաև բժիշկ Թորգոմյանեն ալ։

Կոմիտաս մոտ էր նաև Չիթունիներուն։ Ան թանկագին աշխատակից մը գտած էր հանձին Չիթունիի, որ 1913-ի աշնան Պոլիս փոխադրված էր ընտանիքով, մեկ կողմե առևտրական գործով զբաղվելու և մյուս կողմե շարունակելու իր բանասիրական աշխատանքները և հոգածու ըլլալու անոնց հրատարակության։

«Ես գրեթե դրացի էի Կոմիտասին, կգրե Չիթունին, և հաճախ իրեն կերթայի մինակ, կամ փոքրիկներես մեկ-երկուքի հետ։ Երբեմն ինքը մեզի կուգար։ Այս կերպով հազվադեպ էր, որ զիրար չտեսնեինք օր մը։ Այս հաճախակի տեսակցությունները, գաղափարակցությունը, անկեղծ և իրերաթափանց մտերմությունը բացին իմ հոգիիս առաջ Կոմիտասին հոգին՝ մաքուր, պատվական թրթռուն, բարձրորեն զարգացած, անհունորեն համեստ, անձնվեր զորովով—աննմա՜ն մարդ մը։ Մեծ էր՝ մեծի հետ, փոքր էր՝ փոքրերուն հետ։ Ոչ աշխարհական էր, ոչ վերապահ ձևերու մեջ կծկված կուսակրոն մարդ։ Եղբայր էր ամենուն, ընկեր՝ ամենքի հետ։ Իր բնակարանը բաց էր ամենուն առաջ, ինչպես իր ոսկի սիրտը՝ որ փակ դուռ չուներ ոչ ոքի հանդեպ։

«— Բա՛րև, բա՛րև, ինչպե՞ս ես։
— Հա՜, ո՞ւր ես, ֆերբեճֆելե՜...»:

«Այս և ասոր նման մեկ-երկու իրեն սովորական նախաբան խոսքեն՝ ժպտուն և թրթռուն Լությանը հետ, ներս մտնող անձին կամ անձերու ուղղված, և մտերմությունը հաստատված և լմնցած էր։ Իր բարձր ու սլացիկ հասակը, ուժեղ, կրակոտ նայվածքը, արտակարկառ լայն ու լեցուն ճակատը, լերկ ու խաղուն գանգը, արտակարգ կամքի հատկանիշ լայն կզակն ու թանձր շրթները, ջղուտ ձեռները, հոգեգրավ թրթռուն ձայնը միացած իր բարձր արվեստի կարողությանը,

պարզապես հմայիչ կդարձնեին Կոմիտասի անձը[4]։

Կոմիտաս հայրենակիցներ ալ ուներ Պոլսո մեջ։ Բավական է հիշել նահապետական այն ընտանիքը, որ քեոթահյացի Կարապետ Ջիվերինն էր և որ կբնակեր Օրթագյուղ։

Այս ընտանիքեն էր, որ երկու եպիսկոպոսներ պիտի զային հայ եկեղեցվո՝ Հովսեփ եպ. Կարապետյանը և Գրիգոր Գուսան եպիսկոպոսը, առանց հաշվելու ասոնց մյուս եղբայրները, որոնք նույնպես մտավորականներ եղան տարբեր ասպարեզներու վրա։ Կոմիտաս հաճախ կըլլար անոնց մոտ Պոլսո իր գործունեության տարիներուն, ինչպես պիտի ըլլար մանավանդ այն դժնդակ շրջանին, երբ աքսորեն դարձին, հոգեկան տագնապը կհասուններ իր մեջ։

Եթե իր ծանոթ ընտանիքներեն այս մեկ քանին հիշեցինք անոր համար էր, որ անոնք հաճախ կապ ունեցան նաև իր գործունեության հետ։ Այլապես ասոնցմով չէր փակվեր Կոմիտասի մտերմական շրջանակը։ Անմատչելի էր ան և միևնույն ատեն մատչելի էր բոլորին։ Խրոխտ էր ու համեստ, լուրջ և կատակախոս միևնույն ժամանակ։ Բոլորը կսիրեին զինքը, բայց և կակնածեին։ Թշնամի չուներ և չէր կրնա ալ ունենար. զինք չհասկցողներ միայն կային. որովհետև անոնց համար դեռ շատ կանուխ էր եկած։

Բոլոր իր ծանոթ ընտանիքներու կողքին, որոնց կհաճախեր առիթե-առիթ, և հաճախ առանց առիթի, Կոմիտասի համար նվիրական բան մը ուներ սակայն Օրմանյանի բնակարանը։ Շունչը՝ զոր երբեմն էջմիածնի մեջ թողած էր Ըթրր փողոցի մենակյացը՝ Կոմիտաս իր ներսը կպահեր սրբազան մասունքի մը պես, ու երբեմն-երբեմն կերթար քաղցրացնել ճղնությունը Պոլսո նախկին պատրիարքին, որ այդ օրերուն լուռ կտքներ իր խուցին մեջ՝ ամբաստանության բեռը իր ուսին։

Մաղաքիա արք. Օրմանյանի անսյարտ հուշակված օրը ցնծության օր մը եղավ Կոմիտասի համար ալ։

XVII.— Կոմիտաս իր կատակներուն մեջ

Կոմիտաս կատակը շատ կսիրեր։ Ինչպես իր ուսանողության՝ նույնպես իր վարդապետության տարիներուն ան էջմիածինը ողողած է իր ծիծաղով ու իր կատակախոսություններով։ Իր նախկին պաշտոնակիցներն ու սաները անթիվ նմուշներ կուտան, իրենց հուշերուն մեջ, Կոմիտասի ամենօրյա կատակներեն, և ասոնցմե շատերն ալ բերնե բերան կպատմվեն դեռ մինչև այսօր։

Անոր կատակները կհամեմվեին սրամտություններով և բառախաղերով, որոնց գրեթե մոլին էր Կոմիտաս։ Ան կսիրեր մակդիրներ փակցնել իր ծանոթներուն ու այդ մակդիրները հեգնություն ու ծաղր կպարունակեին հաճախ։ Բայց անոնցմե չէր վշտանա ոչ ոք։

Ամենեն սիրականը այդ մակդիրներեն «քերթենքելեն» էր, որով իր սաները կորակեր առավելապես։ Իսկ «ղուռնաջի» էին իր բոլոր բարեկամները։ Սրամտություն և կատակ անպակաս էին իր նամակներու մեջ ալ։

Երգիծական այն առակը, զոր Կոմիտաս ներմուծած էր 1906 դեկտեմբեր 8-ին Մարգարիտ Բաբայանին ուղղած իր մեկ նամակին մեջ, ակնարկություն է այն մոծակներուն, որոնք խայթած էին զինքը, և որոնք սակայն նախընտրելի են, քան անպիտան մլուկը, որովհետև իրենց բզզոցով նախապես կզգացնեն իրենց գալը։ Իր գանգատին մոծակը կպատասխանե արդարև.

«Արդ պարտքս է.
Բայց ինձ լսե.
Սազով,
Նազով
Ձայն եմ տալիս
Այնպես գալիս:
Զգուշացիր
Դու մլուկից
Որ կծում է
Մորթի տակից»:

Մարգարիտ Բաբայանին ուղղած իր 1906 դեկտեմբեր 8 թվակիր լուրջ մեկ նամակին մեջ հանկարծ կներմուծե ամբողջ հատված մը, ուր «ռ» և «ր» տառերը «լ» դարձած են և «շ» ն՝ «ս».

«Բոլոլին նոլից բալև եմ գլում. սատ ապլիք, ուլախ լինիք, չալը չոլում չոլանա, իսկ սատանան կուլանա։

«Սիլելի օլիոլդ Մալգալիտ. նախ և ալաջ կհալցնեմ ձել թանկագին ալողջությունը. մեզ ոլ հալցնեք, փալք և գոհություն աստծու, սատ տլուզ ենք և ալողջ։ Սատ ու սատ և հաաուկ բալևնելս կմատուցանեմ մայլիկին, հայլիկին, հին և նոլ հալսելին, մեծ ու պստլիկ փիսիկնելին, դոլոլիկ թուլնիկին և ամենեցուն, ոլոնք մեզ կհալցնեն և այլն»[5]։

---

[4] Զիլունի, Կոմիտասին հետ, «Հայրենիք» ամսագիր. 1936/12, էջ 84—85։

[5] Կոմիտաս վարդապետ իր նամակների միջով, «Մշակույթ», Փարիզ, 1935։

Արշալույս Սարգիսյան Կոմիտասի իրենց տված այցերը պատմելու ատեն կհիշե նաև անոր ըրած կատակները.

«Վարդապետը և Փանոսը իրար կգերազանցեին կատակներով ու չարաճճիությամբ։ Իրարու պնակե կերակուր գողնալ, ամեն մեկ կերակուրի վրա երգ հորինել և դեռ ինչե՜ր։

«Ամբողջ սոն մըն էր, հրաշալի խնճույք մըն էր այդ ճաշի պահը. ուտելե ավելի՝ երգ էր, ծիծաղ էր։

«Ճաշեն հետո, բազմոցին անկյունը որոշ տեղն էր վարդապետին, ես ալ քովը, թեքին տակ, փոքրիկ աղջկան լուռ, կախարդված հիացումով։ Կհիշեմ քույրս կրերե սուրճը և հազիվ թե ափսեն ձեռքը վարդապետին մոտեցած աչա վարդապետը կիյնա խորունկ սուտ քունի մեջ։ Կսկսեր խռկալ, դառանցել, երևակայական ճանճեր քշել, բայց ինչ որ ընեինք չէր արթննար։ Ծիլ ասիկա կտևեր, առանց չափազանցնելու հաճախ հինգ վայրկյան և ավելի։ Սուրճը կպաղեր, քույրս կհոգներ և վերջապես այն պահուն, որ ամենքս ալ հուսահատած կըլլայինք՝ ընդոստ կարթըննար վարդապետը, որոտագին քրքիջ մը ձգելով։

«Ակամա կվախնայի, ամեն անգամ, այդ հանկարծակի պոռթկումեն և ամեն անգամ կզգայի խարտյաշ մազերուս վրա, գգվանքը վարդապետին ջղուտ մատներուն»[6]։

***

Իր կատակներեն մեկ քանին հիշողությանս մեջ կմնան մինչև այսօր ալ, այն անուշ վայրկյաններուն հետ՝ երբ իր մոտը ճաշի կըլլայինք Վարուժանն ու ես։

— Վարուժանին ալ ըսե, ու մեկտեղ ճաշի եկեք այսօր մեզի. թանապուր պիտի կերցնե մեզ Փանոսը,— կըսեր պատուհանեն՝ փողոցեն անցնելս նշմարածին պես։

Շաբաթ օրերը կպատահեր ատ։

Վարուժան Լուսավորչյան ուսումնարանի տնօրենն էր այդ տարիներուն, ու ազատ էր շաբաթ օրերը կեսօրեն հետո։

Արդարև սեղանին «քլու»-ն թանապուրը կըլլար, զոր պատրաստած կըլլար վանեցի խոհարարը։ Բայց Կոմիտաս ինքն էր սեղանին համ տվողը իր կատակներով ու իր բառախաղերով, որոնց վերջը չէր գար։

Կգրգռեր, որպեսզի վիճինք Թերլեմեզին հետ ու ինքը զվարճանա և ի վերջո բառախաղով մը փակե մեր վեճը։

— Ինքզինքդ իրավ «սիրո՞ւն» կկարծես, ըսավ օր մը Թերլեմեզը. կիները վրադ անգամ չեն նայիր։ Ինծի հետ փողոց ելիր, որ աղվոր կնկան հանդիպիս...

— Աղվոր կնիկները վանեցիի՞ն կնային, թե՞ Պոլիս մեծցածներուն,— պատասխանեցի ես։

— Սիրունի՛, ընդմիջեց Կոմիտաս, մի բարկացներ Փանոսը. ինչ ալ ըսես ան չի բռնիր... (Թերլեմեզ թուրքերեն չի Fրտճիր, չFրտճող կնշանակե)։

Ուրիշ անգամ մը Կոմիտաս հարցուց.

— Թանապուրին հավնեցա՞ր. մեր վարպետը պատրաստած է. ան ալ Փանոսին պես Վանա դեղեն է...

— Գե՞ղ մի. դեղը քո Օյոթահիան է. մեր Վանը «քաղաք» է, «քաղաք»,— գոռաց Թերլեմեզ...

— Հա՜յ Վա՛ն. մեր Փանոսը սնտեղեն է. դիտե՞ք,— ըսավ Կոմիտաս կուշտ-կուշտ ծիծաղելով։

Ուրիշ օր մը, երբ Փանոսը դարձյալ կպարծենար Վանով, ու կհեգներ Կուտինան, Կոմիտաս պոռաց.

— Զհավնեցի՞ր ղու մեր Կուտինային, քեզ ել, քո Վանն ել կուտի նա:

Կկատակեր հաճախ խոհարարին հետ ալ։

Վարպետներու քաղաք է Վանը, ըսավ ան օր մը։ Փանոսը՝ վարպետ, խոհարարը՝ վարպետ։ (Պոլսո մեջ «վարպետ» կըսեն ատոն խոհարարներուն ալ)։

— Այլուրով լեցուն է մեր խոհանոցը, ըսավ ուրիշ անգամ մը,— կուտենք, կուտենք չի հատնիր։ (Վանա Այլուր գեղեն էր իր խոհարարը)։

Պատահեցավ որ, անգամ մը, երդչախումբի մեկ փորձին ըլլամ Էսայան վարժարանի սրահը։ Կոմիտաս «Հորովել»-ը կփորձեր։ Նախապես բացատրեց երգը, ըսելով իմիջիայլոց, որ «Ծիրան», «Տոկան», «Սիրուն» բառերը, որ երգին մեջ կհիշվին, գեղջուկին եզներն են։ Հետո սկսավ երգել ամբողջ կտորը։ Կարգը եկավ եզներուն, երբ գեղջուկը կփաղաքշե ղանոնք.

— Տե՛, Ծիրան, ե՛լ, ե՛լ... Տե՛, Տոկան ե՛լ, ե՛լ...

Ու հանկարծ մատը ինծի ուղղելով ան շարունակեց.

— Տե՛, Սիրուն, ե՛լ, ե՛լ...

Սրահին կվոնտեր ղիս։ Սկզբնական փորձերուն չէր ուզեր, որ դուրսեն ներկաներ ըլլան, ու ղանոնք կճամբեր ձևով մը, երբեմն խիստ, երբեմն կատակով, երբեմն բառախաղով մը...

Կոմիտասեն մոտս մնացած մասունքներուն մեջ թղթիկ մըն ալ կար։ Տառերու գլուտին սաներուն աոթիվ գրված՝ Կոմիտաս անով իր սանուհիներեն մեկը ինձ կհանձնարարեր։ Էսայան սանուց միությունը, օրվան խանդավառության մեջ, որոշած էր Մեսրոպ

[6] «Պահ մը վարպետին հետ», «Յառաջ»։

Մաշտոցի անունով սան մը որդեգրել և բարձրագույն կրթություն տալ անոր։ Նման ժեստ մը ըրած էր սուգի առթիվ մը. Ադանայի որբերեն սան մը որդեգրած էր։ Հիմա կուզեր նվիրագործեր ցնծության պահը։

Իր երկտողը մոտավորապես սա կերպ կվերշացներ Կոմիտաս.

— Սիրուն ես, բայց եթե կուզես ավելի սիրուն ըլլալ, այս աղջկան խնդիրը կատարե, աստծո սիրուն...

Պատահեցավ որ օր մը Կոմիտասեն խնդրեմ քանի մը տող գրել ալբոմին մեջ անոր. որ հետո պիտի ըլլար կյանքիս ընկերը։ Ալբոմը Վարուժանը կբանար քերթվածով մը, որ սա տողերով կսկսեր.

Կուզեմ բանալ գիրքը կյանքի ու ընել
Մաղթանք մ՝ աղվոր քերթողի...

Իսկ քերթվածի վերջին տողերն էին՝

Զփշրվի՞ ձեռքիդ բաժակն հրեղեն
Ուր կհեղու բախտին նեկտարը
Աստված...

Կոմիտաս հետևյալը գրեց Վարուժանի էջին կոնակը.

«Հրեղեն բաժակը բերանդ կվառե, աղջի՛կ։ Իսկ ես ի՞նչ մրեմ. մատիտս սրեմ, բերնիս մեջ ջրեմ, գոնե անունս գրեմ...»։

Կոմիտասի խումբին մեջ երկու Վարդաններ կային՝ մին Սարգիսյանը, որ հետագային ալ պիտի գուրգուրար վարդապետին թողած ավանդին՝ հայ երգի վրա, և մյուսը՝ Ագկյուլյանը, որ խումբին ամենեն հռչակավոր բասն էր, «քամփանա Վարդան» ևս հորջորջված և որուն ձայնին «թավշային ձայն» կըսի Կոմիտաս։ Արդ, բառախաղի սիրահար մեր վարպետը Վարդաններեն մեկուն «քաջ Վարդան» կըսեր և մյուսին՝ «քած Վարդան», խնդալեն մարեցնելով երկու Վարդաններն ալ։ Թող ընթերցողը ինձ ներե զանց անեմ մատնանշել անոնց մե որո՞ւն է որ «քաջ» կըսեր և որուն՝ «քած»։ Իրականին մեջ կգուրգուրար երկուքին ալ վրա։

Այնքան համով էր իր կատակներուն մեջ, ու սրտով այնքան բարի, որ ոչ մեկը կսկիծ կիմանար իր կսմիթներեն...

XVIII.— Կոմիտաս իր երկունքի պահերուն

Հակառակ հոգերուն, որոնք իր ուսերուն կդնեին երգչախումբն ու համերգները Պոլսո մեջ, Կոմիտաս չէր զադրած նաև ստեղծագործելե։ Իր բոլոր զբաղումներուն մեջ միշտ ատեն գտավ սեփական ստեղծագործություններով ալ պարապելու, դաշնակելու իր հավաքած երգերը և նորեն ևս հավաքելու ամեն անգամ, որ առիթ ներկայացավ։ Ավելին. ան ժամանակ դողցավ նաև տեսական հարցերու համար, և մշակեց ուսումնասիրություններ ու հոդվածներ։

Պոլսո մեջ էր նաև, որ նոր մշակման մը պիտի ենթարկեր իր պատարագը։ Կոմիտաս ինքն իսկ հավաստած է, ինչպես հիշեցինք, թե յոթ տեսակ բազմաձայն դաշնակած է հայկական պատարագը։ Դժբախտաբար ադոնցմե ոչ մեկը դեռ չհայտնվեցավ։ Ոչ իսկ ցարդ գանվեցավ ան, զոր երգել տվավ էջմիածնի մեջ։ Ավելին՝ ոչ իսկ լրիվ հասած է մեզ այն մեկը, որ պիտի մշակեր Պոլիս գտնված ատեն։

Խոսելով Պոլսո մեջ անոր մշակած պատարագին մասին՝ Շահան Պերպերյան կգրե.

«Պիտի ունենայինք ուրիշ պատարագ մը ևս, որ պիտի ըլլար, ինչպես կըսեր ինք, իր կրոնական երաժշտության կարևորագույն երկը, այս անգամ խառն խումբի համար գրված հնգաձայն-վեցաձայն և կառուցված օր. էմի Աբգարի կողմե հրատարակված Ջուղայի պատարագին մայր եղանակներուն վրա, զորս վարդապետը կնկատեր ամենեն հարազատորեն հայկական պատարագի եղանակները. պիտի ունենայինք՝ եթե չպատահեր աղեսը։ Այդ գործը կարևոր մասերով դրված էր արդեն, բայց զարմանալի է, որ անկե ոչ մեկ հետք գտնված է իր թուղթերուն մեջ։ Ո՞ւր անհետացած է արդյոք այդ գործը»[7]։

Կարո Ուշաղլյան կպատմե իր կարգին սա «Զվարթնոց»-ի մեջ.

«Սույն պատարագը դաշնավորելու ատեն, ես անձամբ մոտը գտնված եմ քանի անգամներ։ Ինքը ըսած է ինծի, թե Հնգկաստանեն օր. է. Աբգարեն ստացած է սույն պատարագը։ Երբ ես ըսի իրեն, որ նույն պատարագը մեր Կուտինայի հասարակ կիրակիի պատարագն է, զարմացած նայեցավ և ուզեց որ երգեմ քանի մը կտորներ, որուն վրա, ուրախությամբ ըսավ. «Տեսա՞ր, որ մեր Կուտինայի մեջ պահած են հայկական եղանակները, առանց աղդվելու Պոլսո մոտիկ կեգրոնեն»։ Որովհետև Կուտինայի հայերեն մեծ մաս մը 80—100 տարիի չափ առաջ գաղթած են Պարսկաստանեն, և կկարծվի թե ավելի հինեն ալ Գողթան գավառի կողմերեն դաղութ մը եկած է Կուտինա[8]։

«Գալով այն պատարագին, ես վստահ եմ, որ անոր դաշնավորած ձեռագիրը պետք է մնացած ըլլա վարդապետին գույքերուն մեջ։

[7] Շահան Պերպերյան, Կոմիտաս վարդապետ. անձը և գործը, Պուքրեշ, 1936, էջ 26։

[8] Կոմիտաս իր ինքնակենսագրական նոթերուն մեջ կհիշե թե «Սողոմոնյաններն ու Քեռթահիայի հայ հին ընտանիքները հայկական Զոր ցեղեցն են և գաղթել են ԺԸ դարու վերջում Գողթն գավառի Ցղնո գյուղից»։

իր հիվանդութենեն բավական առաջ էր, որ սկսած էր այդ գործը կարդի դնելու. եթե լրացուցած չէ, շատ բան ալ մնացած պետք չէ ըլլա լրանալու, քանի որ արդեն աղավաղված եղանակ չէր։ Սակայն ո՞ւր են այդ ձեռագրերը. հանելուկ...»։

Հուղումով և արցունքով գրված նամակի մը մեջ, որով իմ կարդ մը հարցումներուս կդատասխանե Կոմիտասի Պոլսո խումբին երբեմնի երգիչներեն Վարդան Ագկյուլյանը, մեկը անոնցմե, որ հաճախ վարպետին մոտ գտնված է անոր ստեղծագործած պահերուն ես, ան ինձ կնկարագրե այդ պահերեն մին,— Այն պահը, երբ Կոմիտաս նստած դաշնամուրին առջև, իր «Սուրբ-Սուրբ»-ը կհորիներ իր պատարագեն երգելով և նվագելով, մինչ հեռուեն իրեն կունկնդրեին իր սաներեն մեկ քանին, երկյուղած ու զմայլագին։ «Այդ պահուն Կոմիտաս իսկական սուրբ մը կերևար աչքիս,— կդրե բարեկամս,— հափշտակված ու վերացած. ու կկարծեի նույնիսկ լուսածիր մը տեսնել իր գլխուն շուրջը»։

Եվ սակայն, ինչպես ըսինք, լրիվ մեր ձեռքը հասած չէ այդ պատարագը, թեև ան երգված է լրիվ։ Ինչ որ Փարիզ տպվեցավ 1933-ին՝ իր կողմե գրի տոնված չէ իր ամբողջությանը մեջ։ Վարդան Սարգիսյան հետևյալ բացատրությունները կուտա հրատարակության սկիզբը.

«Կոմիտաս վարդապետ ներկա Պատարագի վերջնական վերամշակման ձեռնարկած էր 1912-ին աշնան, գրի առնելով մաս առ մաս ու երեկոները սովորեցնելով դպրաց խմբին՝ ինչ որ լրացուցած էր օրվան մեջ։ Աքսորե դարձին փոփոխություններու ենթարկեց դայն և, տպագրելու հույսով սկսավ մաքուրի առնել մինչև ներկա հատորի 17-րդ էջը (Սուրբ Աստված)։ Դժբախտաբար չկրցավ շարունակել հիվանդության սաստկացման պատճառով։ Վերոհիշյալ 17 էջերեն դուրս ներկա հրատարակության մնացյալ մասին համար իբր հիմ ունեցանք այն միակ ինքնագիր օրինակը, որ գտնվեցավ Պոլսո պատրիարքարանեն Փարիզի Կոմիտասյան հանձնաժողովին զրկված վարդապետին ձեռագիրներուն մեջեն և զոր կթվի թե հեգինակը ձեռք առած է բազմաթիվ անգամներ և խճողած է իրարու վրա կրկնված սրբագրություններով—եվրոպական թե համբարձումյան նոթագրությամբ—օգտագործելով մինչև իսկ լուսանցքները և անընթեռնելի գարձնելով էջերուն կեսեն ավելին։

«Ուշադիր քննութենե մը երևան կուգա, որ վարդապետը ոչ միայն փոխած է բազմաթիվ հատվածներու նախկին ձևերը, այլ նաև անոնց տված է մեկեն ավելի դաշնավորումներ, ինքն իսկ վարանելով անոնց մեջ ընտրություն մը ընել ինչ որ ենթադրել կուտա մեզ, թե անոնք առաջին ձևերեն ավելի հաջող չեն թված միշտ իրենց։

«Մեր միտքը ամենեն ավելի լլկեց ուրեմն ընարության փափուկ հարցը, որուն մեջ ի գործ դրինք վերջին աստիճանի զգուշավոր տարեխղճություն գուշակելու համար հեղինակին նախասիրությունները կամ գոնե մոտենալու համար անոնց կարելի եղածին չափ։ Դալով այն հատվածներուն, որոնք բոլորովին տարակուսելի էին կամ անթափանց՝ պահեցինք զանոնք իրենց նախկին ձևի մեջ, հիմնվելով առաջին ընդարի մեկ արտայություն վրա։

«Նկատելով որ մեր ձեռքը գտնված բնագիրներուն մեջ կպակսեին ինչ-ինչ հարակից մասեր. մեր կողմե ավելցուցինք զանոնք մասամբ հիշողաբար և մասամբ հետևելով այն ոճին՝ որով վարդապետը ինքն իսկ դաշնավորած է միևնույն ձայնելվեջն ունեցող ուրիշ կտորներ»[9]։

Իսկ նույն հրատարակության առաջաբանին մեջ կսվի.

«Հայասանայաց եկեղեցվո պատարագի դաշնակումը, զոր կատարած է Կոմիտաս վարդապետ մեր բազմավաստակ երաժիշտին բազմաձայնական արտադրության կարևորագույնն է։ Վարդապետը անոր վրա աշխատած է այն օրերեն սկսյալ, որ դպրապետ էր էջմիածնի Մայր Տաճարին, մինչև այն բոպեն՝ ուր անողորմ հիվանդություն մը անոր գործունեությունը կասեցուց։ 1908-ի աշնան վերջերը էջմիածին կայացած տղղային եկեղեցական ժողովեն հետո, ուր Իղմիրլյան Սրբազան կաթողիկոս ընտրվեցավ, տաճարին մեջ մատուցված հանդիսավոր պատարագի ատեն, ան՝ դպրաց խումբին իր այս գործը երգել տվավ՝ իր առաջին ձևին մեջ։ Մեր պատարագի հիմնական եղանակները ան քաղած էր մասամբ՝ անշուք գյուղերու քահանաներեն, որոնցմե իր լսած ավանդական հին եղանակները ինքը կհամարեր ավելի հայագրոշմ ու գեղեցիկ, քան Պոլսո, Թիֆլիսի կամ Թեհրանի մեջ երգված պատարագի եղանակները, որ ավելի կամ նվազ չափով օտար ազդեցություններ կրած կամ տեղական տիրացուներու կողմե քմածին փոփոխություններու ենթարկված են։ Ու մասամբ ան օգտված էր նաև Հ. Թաշճյանի հրատարակած պատարագի պոլսական եղանակներեն զանոնք գտնելով, անոնցմե վտարելով բյուզանդական նկամուտ տարրերը»։

---

[9] Կոմիտաս վարդապետ. Երգեցողություն Սրբոյ Պատարագի, Փարիզ, 1933, Ներածություն։

Բացի իր պատարագի նոր մշակումեն, Կոմիտաս Պոլսո մեջ մշակեց կամ իր բառով՝ «դաշնակեց» նախապես իր գրի առած գեղջուկ երգերեն հարյուրավորներ։ Անոնք չհայտնվեցան, սակայն. Պոլսո իր գույքերուն մեջ, երբ 1922-ին իր սնտուկները բացին՝ անոնց պարունակության ցուցակը կազմելու համար։ Այնուամենայնիվ անոնց մեջ շատեր, բարեբախտաբար, հետզհետե երևան եկան այդ թվականեն հետո աշխարհի զանազան անկյուններեն, ու ինձ համար մինչև այսօր ալ պարզ չէ, թե որ հովն էր զանոնք տարտղնողը...

Գոհարիկ Ղազարոսյան, երբեմն աշակերտ Կոմիտասի, կգրե թե՝ «Հրաշքով մը 1943-ին ձեռս ինկան վարդապետին երկու տետրակները, որոնք կպարունակեին յոթանասուն անտիպ ժողովրդական երգեր, գրի առնված 1913-ին արևելյան ձայնագրությամբ»[10]։

Պոլսո իր տարիներուն էր, որ Լայպցիգի մեջ տպվեցան 20 երգեր իր դաշնակածներեն[11], ու ասոնցմե զատ որևէ երաժշտական հրատարակություն չունեցավ։ Հազիվ թե հոժարեցավ իր դաշնակած երգերեն մեկ քանի տպել տալ զանազան պարբերականներում և տարեգիրքերու մեջ, ինչպես «Իմ չինարի յարը»[12], «Տեր ողորմյա»»[13], «Լոռու գութաներգը»[14], «Օ, մեծասքանչ դու լեզու»[15], «Երի, Նրի, Երի ջան»[16], *այս վերջինը առնված «Հայ քնարի» Փարիզյան 1907-ի հրատարակութենեն։*

Ան մոռացության չտվավ նաև հարևան ժողովուրդներու գեղջուկ երգերը։ Քրդական եղանակներով ան զբաղած էր զեռ շատ կանուխեն, և քրդական 13 մեղեդիներ լույս ընծայած էր 1904-ին Մոսկվային մեջ[17]։ Պոլսո մեջ ան մշակեց թրքական ժողովրդական երգեր ալ։

Տարիներ հետո, այն է 1935-ին Պոլսո մեջ լույս պիտի տեսներ, օրինակ, Թուրքերեն և հայերեն լեզուներով պրակ մը, որ կպարունակեր Կոմիտասի ձայնագրած ժողովրդական երգերեն մեկ քանին։

Մեծ մասամբ սակայն անտիպ մնացին Կոմիտասի դաշնակած թուրք ժողովրդական երգերը։ Պրոֆ. Ա. Աբրահամյանի միջոցով Բեյրութեն էջմիածին բերված նյութերուն մեջ երևան ելավ նաև տետրակ մը, ամբողջ 140 էջ, ուր արևելյան-թրքական եղանակներ կային[18]։

Պոլսո մեջ էր դարձյալ, որ Կոմիտաս սկսավ մշակել իր քանի մը ուսումնասիրությունները հայ գեղջուկ երաժշտության մասին։ Ճիշտ է, որ ատեն չունեցավ իրենց վերջնական ձևը տալու այդ ուսումնասիրությանց, և ոչ ալ հուսկ խմբագրութենե մը անցնել հայ գեղջուկ երաժշտության մասին իր ծավալուն մեկ երկը, որուն նախնական շարադրանքը կատարված էր 1907-ին և որ իր այդ անավարտ վիճակին մեջ լույս տեսավ իր մահեն հետո[19]։

Պոլսո մեջ մշակած իր տեսական նյութերեն քիչերը միայն հանձնեց տպագրության, ինչպես հակիրճ հոդված մը խազերու նշանակության մասին[20], ուրիշ մը հայ գեղջուկ երգերու վրա[21], հայ ինքնուրույն երաժշտության գոյության շուրջ համբավավոր գրությունը[22], քանի մը նոթեր՝ հայերեն հին ձեռագրե մը քաղված՝ երաժշտության օգտագործման մասին բժշկության մեջ[23]։

Տարակույս չկա, որ Կոմիտաս նույնիսկ իր այդ բազմաղբաղ օրերուն չէր դադրեցուցած իր ուսումնասիրական թափառումները հայ անցյալին մեջ։

Պոլիս անշուշտ հարմար միջավայր չէ բանասերին ու պրպտողին համար. աղբյուր ու ատաղձ կպակսեին հոն։ Աղդ. Մատենադարանը տարիներե ի վեր լքված իր բախտին գոհացում չէր տա խուզարկուին, իսկ ան քանի մը ճոխ դրադարանները, զորս մասնավորներն ունեին, հեռու էին Կոմիտասի մտահոգությանց համապատասխանելե։ Բարեբախտաբար նյութեր ու նոթեր բերած էր ան էջմիածինեն ի հարկին օգտագործելու համար զանոնք, իր նոր պրպտումներուն մեջ։ Ադոնց շնորհիվ էր, որ Կոմիտաս կշարունակեր իր հետազոտությանց առարկա պահել հայ հին խազերը, զորս ոչ իսկ վայրկյան մը հեռացուցած էր իր անմիջական շահագրգռութենեն, և որոնց մասին պիտի հաջողեր որոշ եզրակացությանց հանգիլ 1914-ի Միջազգային երաժշտական համաժողովին ներկայանալե առաջ։

[10] *«Ալիք», Թեհրան, 1945, թիվ 75։*

[11] *«Հայ գեղջուկ երգեր», Լայպցիգ, 1913։*

[12] *«Արազած», 1910, էջ 10։*

[13] *«Ամենուն տարեցույցը», 1914, էջ 258—259։*

[14] *«Նավասարդ», 1914, էջ 336—339։*

[15] *«Ամենուն տարեցույցը», 1915, էջ 247—249։*

[16] *Անդ, էջ 250—251։*

[17] Mel lles Kuraes recveillies per arhimandrite Comitas. Woscov, 1904.

[18] *«Էջմիածին», 1952, 8-րդ, էջ 41։*

[19] *«Անահիտ», Փարիզ, 1935, № 6, էջ 27—36, 1936, № 1—2, էջ 41—48, և № 4, էջ 1—22, 1937, № 1—2, էջ 28—32 և № 3—4, էջ 17—31։*

[20] *«Տաճար», 1910, էջ 10։*

[21] *«Ձեռաց տետր հայ գեղջուկ համերգի», 1911։*

[22] *«Ազատամարտ», 1913, Սեպտեմբեր 18/1 Հոկտեմբեր։*

[23] *«Ամենուն տարեցույցը», 1915, էջ 242—246։*

Միակ հոդվածը, զոր շարադրեց և տպեց 1914-ին՝ այդ նյութերու հիման վրա, նվիրված էր մեր նախնիքներու փորձերուն երաժշտությունը կիրարկելու համար բժշկության մեջ։ Այդ նյութերը քաղված էին էջմիածին պահված հին ձեռագիրե մը, որ երաժշտությունը կբաժներ երկու տեսակի՝ «աստվածային և մարդկային», որոնցմե առաջինը կերգեն եկեղեցիներու մեջ՝ հանցավոր հոգիները դեպի ղղջում ածելու և մեղավոր մտքերը դեպի բարին փոխարկելու համար, իսկ մարդկայինը՝ ուրախության և հանդեսներու մեջ։ Կոմիտաս ձեռագրին տվյալներն քաղելով կգրեր թե «Հները փորձեցին և գտան զի օգտակար է ի պէտս բժշկութեան ուստի և որոշեցին ե գործադրեցին, որ երգեն և առ հիւանդս, որովհետև որպէս ըմպելիք դեղոյ ընդ նաշակելիսն աղգում է հիվանդության վրա ե սա (երաժշտությունը) ընդ լսելիսն։ Քանի որ ձայնն անմարմին է և մեծ զորութիւն ունի և ազգակցութիւն առ հոգին, ուրեմն ե ընդունելով հոգի զվարճականն կիրք, ներգործէ առ մարմին և տրամադրեալ փոխէ ըզնա յիւրմէ բնութենէն։ Արդ, իմաստուն երաժիշտներր հնարում են պարագային հարմար գործիքներ ու եղանակներ, որոնցմե դժբախտաբար չէ մնացել և ոչ մի օրինակ»[24]։

Փոխարեն՝ Պոլսո իր նույն այդ տարիներուն էր, որ Կոմիտաս շարադրեց իր մեկ քանի ուսումնասիրությունները, որոնք նյութ պիտի ծառայեին իր դասախոսությանց Երաժշտական Միջազգային Համաժողովին մեջ 1914-ին, որոնցմե մեկը Լոռու գութաներգի մասին ինքն իսկ տպեց մեր «Նալասարգ»-ին մեջ[25], և ուրիշ մը, որուն նյութը հայ եկեղեցու առոգանության նշաններու սիստեմն էր լույս տեսավ հետմահու[26]։

Կոմիտասի Պոլսո տարիները՝ ոչ միայն երկունքի, այլ նաև որոշ չափով ստեղծագործության տարիներ եղան այսպես։

---

[24] Կոմիտաս վարդապետ, Բժշկություն երաժշտությամբ (մեկ էջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 2359 համար ձեռագրեն), «Ամենուն տարեցույց», 1915, էջ 242—244։

[25] «Նալասարգ», Կ. Պոլիս, 1914, էջ 312—336։

[26] «Անահիտ», Փարիզ, 1937, թիվ 5—6, էջ 2—9։

(Շարունակելի)